

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ Մ. ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳԵՐԱՍԻՄԻ ԹՈՒՆՅԱՆ

ՄՐՏԻ ԽՈՌՈՉՆԵՐԻ ՎԵՐԱԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱԹՈՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ ԵՎ  
ՆԱԽԱՍՐՏԵՐԻ ՇՈՂԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՌԻՄԿՐ ՈՉ ՓԱԿԱՆԱՅԻՆ  
ԱՆՏԱԾԱԳՄԱՄԲ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՐՏԱՄՂՄԱՆ ՖՐԱԿՑԻԱՅՈՎ ՄՐՏԱՅԻՆ  
ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՍՈՑ

ԺԴ. 00.04 -«Մրտաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների  
դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան - 2017

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ  
им. М. ГЕРАЦИ

ЛУСИНЕ ГЕРАСИМОВНА ТУНЯН

ПАТОФИЗИОЛОГИЯ РЕМОДЕЛИРОВАНИЯ КАМЕР СЕРДЦА И ОЦЕНКА РИСКА  
ФИБРИЛЛЯЦИИ ПРЕДСЕРДИЙ У БОЛЬНЫХ С СЕРДЕЧНОЙ  
НЕДОСТАТОЧНОСТЬЮ С СОХРАННОЙ ФРАКЦИЕЙ ВЫБРОСА НЕКЛАПАННОГО  
ПРОИСХОЖДЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора медицинских наук  
по специальности 14.00.04 – «Кардиология»

Ереван – 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Լ.Ա. Հովհաննիսյանի անվ. Սրտաբանության ԳՀԻ գիտական խորհրդի նիստում:

Գիտական խորհրդատու՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բ.գ.դ., պրոֆ Կ.Գ.Ադամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝  
բ. գ. դ. պրոֆեսոր. Հ.Գ. Հայրապետյան  
բ. գ. դ., պրոֆեսոր Ռ.Ս. Գաբրիելյան  
բ. գ. դ., պրոֆեսոր Ա.Ս. Մինասյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԱՆ Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԻ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մարտի 2-ին ժամը 14:00 ԵՊԲՀ-ում գործող ՀՀ ԲՈՂ-ի «Թերապիա-028» մասնագիտական խորհրդում (ՀՀ, ք. Երևան, 0025, Կորյունի փող. 2):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊԲՀ-ի գրադարանում:  
Սեղմագիրն առաքված է 2017թ. հունվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝  բ.գ.թ. Լ.Ա. Թունյան

---

Тема диссертации утверждена на заседании ученого совета НИИ Кардиологии им. Л.А. Оганесяна.

Научный консультант: академик НАН РА, д.м.н., профессор, К.Г.Адамян  
Официальные оппоненты: д.м.н., профессор Г.Г. Айрапетян  
д.м.н., профессор Р.С. Габриелян  
д.м.н., профессор А.М. Минасян  
Ведущая организация: НИИ Курортологии и физической медицины МЗ РА

Защита состоится 2 марта 2017г., в 14:00 на заседании специализированного совета ВАК «028-Терапия» при ЕГМУ им. М. Гераци (РА, 0025, г. Ереван, ул. Корюна 2)  
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГМУ им. М. Гераци.  
Автореферат разослан 27 января 2017г.

Ученый секретарь

специализированного совета  к.м.н. Л.Г. Тунян

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### **Թեմայի արդիականությունը.**

Պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությունը (ՊԱՖՍԱ) ձախ փորոքի (ՁՓ) համեմատաբար նորմալ (աննշան իջած) կծկողական ֆունկցիայով սրտային անբավարարություն է, սակայն դիաստոլիկ թուլացման և լեցման խիստ արտահայտված խանգարմամբ, որն ուղեկցվում է փորոքում վերջնական դիաստոլիկ ճնշման աճով, արյան փոքր շրջանառության մեջ կանգով և սրտային անբավարարության այլ նշաններով: ՊԱՖՍԱ-ն կազմում է քրոնիկ սրտային անբավարարության դեպքերի մոտ 50%-ը (Owan TE, Redfield MM, 2005): Այն ունի աճի միտում և տարեկան 1%-ով գերազանցում է ցածր արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարության դեպքերը (Go AS et al., 2013):

Ներկայումս ՊԱՖՍԱ-ն հանրային առողջապահության համար հանդիսանում է խոշորագույն, աճող և մինչև վերջ չուսումնասիրված հիմնախնդիր: Դեռևս անորոշ են մնում ՊԱՖՍԱ-ի պաթոֆիզիոլոգիան և բուժումը, օպտիմալ վերահսկման եղանակները: Այն հիմնահարցը, թե արդյո՞ք պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությունը և ցածր արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությունը երկու առանձին միավորներ են, թե՛ միևնույն հիմնախնդրի երկու բևեռներ, հանդիսանում է բազմաթիվ քննարկումների առարկա (Borlaug BA et al. 2011; Komajda M. et al., 2014): ՊԱՖՍԱ-ի հիմնախնդիրը հնարավոր եղավ ուսումնասիրել համեմատաբար վերջերս՝ ի շնորհիվ դիաստոլիկ դիսֆունկցիայի ախտորոշման նորագույն մեթոդների զարգացման: Պարզվեց նաև, որ մեծ քանակի տարեց և/կամ հարակից հիվանդություններ ունեցող անձինք ունեն նախակլինիկական տարբեր աստիճանների դիաստոլիկ դիսֆունկցիա, որը կարող է վերափոխվել ՊԱՖՍԱ-ի կամ մնալ ասիմպտոմատիկ՝ անկախ դիաստոլիկ դիսֆունկցիայի աստիճանից, իսկ այդ անցման պատճառները դեռևս անհայտ են (Bronzwaer JG et al., 2009):

Չնայած վերջին շրջանում կատարվել են հետազոտություններ, որոնք ուսումնասիրում են ՊԱՖՍԱ-ի ժամանակ տեղի ունեցող փոփոխությունները, այնուամենայնիվ, դրանց քանակը այդքան էլ շատ չէ, դեռևս բազմաթիվ հարցեր մնում են անպատասխան: Պարզաբանման կարիք ունեն մի շարք հարցեր. ՊԱՖՍԱ-ի ժամանակ ինչպիսի՞ փոփոխություններ են կրում սրտի խոռոչները, ինչպիսի՞ փոփոխություններ և ի՞նչ տարբերություններ կան ձախ փորոքի նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայի (ՆԴԴ) և ՊԱՖՍԱ-ի ժամանակ, որո՞նք են տեղի ունեցող էխոսրտագրական փոփոխությունները, ինչպիսի՞ փոխկապակցվածություն կա

դրանց մեջ, որոնք են ՆԴԴ-ի անցման ՊԱՏՄԱ-ի կանխորոշիչները, որքան է նախասրտերի շողացման (ՆՇ) հաճախականությունը ՆԴԴ-ով և ՊԱՏՄԱ-ով ոչ փականային ախտաձագմամբ հիվանդների մոտ, որոնք են հանդիսանում ՆՇ-ի առաջացման համար էխոսրտագրական կանխորոշիչ տեղեկաբեր չափորոշիչներ: Վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությունը հիմնավորում է առաջարկվող աշխատանքի արդիականությունը

**Հետազոտության նպատակն է,** գնահատել նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայի և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարության ժամանակ սրտի խոռոչների կառուցվածքային և ֆունկցիոնալ ցուցանիշների փոփոխությունները, որոշել նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայից պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարության վերաձևափոխման կանխորոշիչները, ինչպես նաև հայտնաբերել այն չափորոշիչները, որոնք կանխորոշում են նախասրտերի շողացման առաջացումը նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ:

**Հետազոտության խնդիրներն են.**

1. Պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ և նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդների խմբերում հայտնաբերել սրտի խոռոչներում ընթացող էխոսրտագրական փոփոխությունների դինամիկան:
2. Պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ և նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդների մոտ հայտնաբերել սրտի խոռոչների սիստոլիկ և դիաստոլիկ ցուցանիշների միջև առկա միջխմբային տարբերությունները:
3. Նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդների խմբում ուսումնասիրել պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարության զարգացման դինամիկան, ցուցանիշների փոխկապակցվածությունը:
4. Նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդների մոտ որոշել պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարության զարգացման կանխորոշիչները:
5. Ուսումնասիրել ձախ փորոքի դիաստոլիկ ռեզերվը և աջ սրտի դիսֆունկցիայի աստիճանը պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ և նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդների մոտ, կիրառելով ժամանակակից մեթոդներ՝ 3D/4D, հյուսվածքային էխոսրտագրություն, դիաստոլիկ սթրես էխոՄԳ:

6. Պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ և նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդների մոտ որոշել նախասրտերի շողացման զարգացման ընթացքը, կանխորոշիչները

### **Աշխատանքի գիտական նորույթը**

Առաջին անգամ ժամանակակից, դինամիկ հետազոտությունների (3D/4D, հյուսվածքային էխոՄԳ, սթրես էխոՄԳ հյուսվածքային էխոՄԳ-ի կիրառմամբ) հիման վրա բացահայտվել են սրտի խոռոչների մորֆոլոգիական և ֆունկցիոնալ փոփոխությունները, բնորոշ նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ: Առաջին անգամ բացահայտվել են նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայից դեպի պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարության վերափոխման մեխանիզմները: Առաջին անգամ նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ համեմատական ձևով գնահատվել են ձախ նախասրտում, ձախ փորոքում, աջ նախասրտում, աջ փորոքում տեղի ունեցող վերաձևափոխման ընթացքը, առանձնահատկությունները, որոշվել են առավել բնորոշ էխոսրտագրական չափորոշիչները: Առաջին անգամ նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ որոշվել են նախասրտերի շողացման առաջացման էխոսրտագրական կանխորոշիչները:

### **Աշխատանքի գործնական նշանակությունը**

Աշխատանքի գործնական արժեքը կայանում է սրտի խոռոչների դիսֆունկցիայի առանձին, ինչպես նաև՝ համակցված փոփոխությունների ժամանակին բացահայտումը նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ: Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նաև նախասրտերի շողացման առաջացման էխոսրտագրական չափորոշիչների հայտնաբերումը նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ:

Նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարությամբ հիվանդների մոտ հայտնաբերվել են սրտի խոռոչների կառուցվածքային և ֆունկցիոնալ կանխորոշիչ չափորոշիչներ, բացահայտվել են սրտի խոռոչներում ընթացող հավաստի փոփոխությունները, դրանց փոխկապակցվածությունը, ինչպես նաև՝ այդ փոփոխությունների նշանակությունը խոռոչների դիսֆունկցիայի զարգացման գործընթացում: Մշակվել են ախտորոշիչ համալիր չափորոշիչներ, որոնց հիման վրա հնարավոր է ուսումնասիրել ինչպես սրտի խոռոչների դիսֆունկցիայի գործընթացը, այնպես էլ կանխագուշակել նախասրտերի շողացման առաջացման ռիսկը:

Այս ամենը թույլ է տալիս բացահայտել նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով հիվանդներին, որոնք ունեն ՊԱՖՄԱ-ի զարգացման բարձր ռիսկ, և կանխարգելել ՊԱՖՄԱ-ի զարգացումը, ճշգրիտ ախտորոշել ՊԱՖՄԱ-ն վաղ շրջաններում և, հետևաբար, կազմակերպել ավելի վաղ բուժման ստրատեգիա, ինչպես նաև՝ բացահայտել նախասրտերի շողացման զարգացման բարձր ռիսկի նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայով և ՊԱՖՄԱ-ով հիվանդներին և ժամանակին մշակել բուժման ծրագիրը:

**Աշխատանքի փորձաքննությունը տեղի է ունեցել** ՀՀ Սրտաբանության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում (արձանագրություն թիվ 3, 2016 թ.-ի հունիսի 24): Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել և քննարկվել են Հայաստանի սրտաբանների վեհաժողովներում (2005-2015թթ.), Համաշխարհային սրտաբանների վեհաժողովներում (2008թ., 2010թ.) և Եվրոպական սրտաբանների վեհաժողովներում (2009, 2010, 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016թթ.):

**Հրատարակություններ.** Ատենախոսության թեմայով հրատարակվել է 47 տպագիր աշխատանքներ (հոդվածներ և թեզիսներ): Տպագրված հոդվածներից 6-ը՝ առանց համահեղինակների են, 5-ից ավելին ցիտվում են «Web of Science», «Scopus», «Pubmed» շտեմարաններում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը.**

Աշխատանքը շարադրված է 251 մեքենագրված էջի վրա և կազմված է հետևյալ մասերից. ներածություն, 5 գլուխներ, եզրակացություններ, գործնական ցուցումներ: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 281 աղբյուրներ: Աշխատանքը ներկայացված է 64 աղյուսակով, 28 գծանկարով և 4 նկարներով :

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒՅԻ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **Հետազոտության նյութը**

Հետազոտության տվյալները հիմնված են 375 հետազոտվողների ուսումնասիրության արդյունքների վրա: Հետազոտության մեջ ներառվել են մետաբոլիկ սինդրոմով 325 հիվանդ՝ 67±8 տարեկան, բավարար էխոսրտագրական (ԷխՍԳ) տեսանելիությամբ, որոնց մոտ ախտորոշվել է ձախ փորոքի նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիա կամ ՊԱՖՄԱ (NYHA II-III): Հիվանդները բաժանվել են երկու խմբի. առաջին խումբը կազմել են ՆԴԴ-ով, իսկ երկրորդ խումբը՝ ՊԱՖՄԱ-ով հիվանդները: Ստուգիչ խումբ են կազմել նույն տարիքի 50 առողջ անձինք: Հիվանդների տարաբաժանումը ՆԴԴ-ի և ՊԱՖՄԱ-ի կատարվել է ըստ հանգստի և ծանրաբեռնվածության ժամանակ կատարված ԷխՍԳ դիաստոլիկ ցուցանիշների տվյալների:

Խմբերում և ենթախմբերում ըստ սեռի, զարկերակային ճնշման, շաքարային դիաբետի, նաև՝ ՁՓ-ի գերաճի առկայության, հիվանդների քանակը էականորեն չի տարբերվել (աղյուսակ 1):

# Աղյուսակ 1

## Խմբերում հիվանդների տեղաբաշխումը

	ՆԴԴ	ՊԱՖՍԱ (NYHA II/III)	P
Հիվանդների քանակը	162	163	>0.05
Կանայք (n)	97	96	>0.05
Շաքարային դիաբետ (n)	38	40	>0.05
Զարկերակ. գերճնշում (n)	124	123	>0.05
ԶՓ-ի գերաճ (n)	110	109	>0.05

Հետազոտության մեջ չեն ընդգրկվել այն հիվանդները, որոնց մոտ առկա են եղել թոքային սիրտ, արտահայտված փականային ախտահարումներ, անկայուն ստենոկարդիա, պերիկարդիտ, ռեստրիկտիվ, հիպերտրոֆիկ, դիլատացիոն կարդիոմիոպատիաներ ունեցողները, բնածին արատներ, սինուսային հանգույցի թուլություն ունեցող հիվանդները, Հիսի խրձի որևէ ոտիկի լրիվ պաշարում, նախասիրտ-փորոքային I (PQ > 280 մվ)-III աստիճանի պաշարում ունեցող հիվանդները, ռիթմի արհեստական խթանիչ պատվաստված հիվանդները, լյարդի, երիկամների, թոքերի, ծանր սոմատիկ հիվանդություններ ունեցողները:

### Հետազոտության մեթոդները

Հիվանդների հետազոտությունը իր մեջ ներառել է զանգատների ուսումնասիրություն, անամնեստիկ տվյալներ, օբյեկտիվ չափորոշիչների փոփոխությունների և լաբորատոր-գործիքային հետազոտության եղանակների ուսումնասիրություն. պարբերաբար որոշվել է զարկերակային ճնշումը. Զարկերակային գերճնշում է ախտորոշվել է ըստ 2013թ. Եվրոպական ուղեցույցների: Բոլոր հետազոտվողների մոտ որոշվել է մարմնի զանգվածի ինդեքսը (ՄՁԻ):

Մետաբոլիկ սինդրոմը ախտորոշվել է NCEP-ATP III 2001 [Executive Summary] չափորոշիչներին համապատասխան: Բարձր զարկերակային ճնշմամբ և քաղցած վիճակում արյան մեջ գլյուկոզայի բարձր մակարդակ ունեցող հիվանդները ամենաքիչը մեկ տարի բուժում են ստացել:

Բոլոր հիվանդները ստացել են անհատական հակահիպերտենզիվ բուժում (միզամուղներ, ԱՓՖ ինհիբիտորներ, Ca-ի ներհակորդներ, բետա ադրենապաշարիչներ): Անամնեզում պերսիստենտ ՆՇ-ով հիվանդներից երեքը ստացել են ամիոդարոն՝ օրական 200 մգ պահպանիչ դեղաչափով: Մնացած հիվանդները մինչև հետազոտության մեջ ներառվելը հակաատիթմիկ բուժում չեն ստացել (բացառությամբ բետա ադրենապաշարիչներից):

Տրանսթորակալ ԷխոՄԳ կատարվել է Vivid 7 Dimension GE Ultrasound (Horten, Norway) սարքով՝ ըստ Ամերիկյան Էխոսրտագրության ասոցիացիայի ցուցումների (Lang R.M. et al., 2005): ԷխոՄԳ-ը կատարվել է օգտագործելով M4S բազմահաճախական տվիչը՝ 2D պատկեր ստանալու համար և 3V տվիչը՝ բազմապլանային և 3D/4D ամբողջական ծավալային (full-volume) պատկերներ

ստանալու համար: Սրտի 5 կծկումների տեսապատկերը և 5 ցիկլի ԴոպլերՍԳ պահպանված տվյալները հետագայում վերլուծվել են EchoPack, GE Healthcare ծրագրի փաթեթով: Առկա կոմերցիոն ծրագրային փաթեթի միջոցով (TomTec Imaging Systems 4D LV Function 2.2.1, Unterschleißheim, Germany) սրտի խոռոչների ձայնագրված չափորոշիչները ենթարկվել են հետագա վերլուծության. կիսավտոմատ եղանակով որոշվել են ծավալները, արտամղման ֆրակցիան (ԱՖ), հարվածային (ՀՕ), ըրպեական (ԲՕ) ծավալները, սիստոլիկ դիսսինքրոնիայի ինդեքսը (ՄԴԻ), նաև՝ մի շարք հյուսվածքային էխոսրտագրական չափորոշիչներ (Kapetanakis S et al., 2005): Սրտի կծկումները գրանցվել են կրկնվող ցիկլերի ձևաչափով (cine-loop): Բոլոր հիվանդների տվյալները ձայնագրվել են և պահպանվել են սարքի հիշողության մեջ, այնուհետև այդ տվյալները տեղափոխվել են սարքի մեջ առկա Exel ծրագիր և ենթարկվել են հետագա վիճակագրական վերլուծության՝ վիճակագրական վերլուծության փաթեթներով:

Միջհետազոտական շեղումները գնահատվել են ըստ պատահական ընտրված 10 հետազոտվող անձանց (5 առողջ անձանց և 5 հիվանդների) շեղման գործակցի:

#### Էխոսրտագրական չափումներ

##### Կառուցվածքային, հեմոդինամիկ, Դոպլեր և 3D ԷխՈՍԳ չափումներ

*Ձախ նախասրտի չափումները.* ՁՆ-ի մաքսիմալ ծավալը (ՁՆՄՕ) եռաչափ եղանակով հաշվարկվել է միտրալ փականի բացման պահին, իսկ նվազագույն ծավալը (ՁՆՆՕ) հաշվարկվել է՝ սկսած միտրալ փականի փակման պահին: Որոշվել է նաև ՁՆՄՕ ինդեքսը (ՁՆՄՕԻ)՝ բաժանելով այն մարմնի մակերեսի վրա:

*Ձախ փորոքի չափումները.* ՁՓ-ի վերջնական դիաստոլիկ (ՁՓՎԴՕ) և սիստոլիկ (ՁՓՎՄՕ) ծավալները, արտամղման ֆրակցիան (ԱՖ), հարվածային (ՀՕ) և ըրպեական (ԲՕ) ծավալները և սիստոլիկ դիսսինքրոնիայի ինդեքսը (ՄԴԻ) հաշվարկվել են ավտոմատ կերպով քառաչափ ռեժիմով TomTec ծրագրով:

Ձախ փորոքի զանգվածը (ՁՓԶ) հաշվարկվել է ըստ մակերես-երկարություն մեթոդի, որից հետո հաշվարկվել է նաև ՁՓԶ ինդեքսը (Lang RM et al., 2005):

##### *Դոպլեր էխոսրտագրություն*

Խոռոչային դոպլեր էխոՍԳ կատարվել է արյան հոսքի ուղղության և ուլտրաձայնային ալիքի միջև նվազագույն շեղումով իմպուլս-ալիքային (PW) և մշտական ալիքային (CW) ռեժիմներով: Որոշվել է ՁՓ-ի իզոմետրիկ թուլացման ժամանակը (IVRT), ՁՓ-ի արտատար հատվածի արագություն-ժամանակ արտադրյալը (VTI): Հաշվարկվել են նաև տրանսմիտրալ և տրանստրիկուսպիդալ վաղ լեցման (E), նախասրտային լեցման արյան հոսքերի արագությունները (A), նրանց փոխհարաբերությունը (E/A), տրանսմիտրալ և տրանստրիկուսպիդալ վաղ լեցման արյան հոսքի դանդաղեցման (DT) ժամանակները:


##### *Հյուսվածքային էխոսրտագրություն. Հեմոդինամիկ ցուցանիշների որոշում*

Ապիկալ չորս խոռոչանի դիքքից դիաստոլայի ժամանակ միտրալ և տրիկուսպիդալ օղերի շարժման արագությունները չափվել են վաղ դիաստոլայի ժամանակ՝ նրանց լատերալ և մեդիալ մասերի շարժման արագությունների միջինացմամբ ( $\epsilon'$ ): E/ $\epsilon'$




հարաբերությունը ընտրվել է որպես ոչ ինվազիվ չափորոշիչ՝ ՁՓ-ի և ԱՓ-ի լեցման ճնշումների գնահատման համար (Nagueh SF et al., 2009):

Նկար 1. Չախ փորոքի երկայնակի սեգմենտար և ընդհանուր դեֆորմացիայի որոշումը



Կորագծերը – 17 սեգմենտների երկայնակի դեֆորմացիա, կլորը – 17 սեգմենտների առավելագույն երկայնակի դեֆորմացիա կարճ առանցքում

Նկար 2. Չախ փորոքի հետսիստոլիկ ինդեքսի որոշումը




Սեգմենտների հետսիստոլիկ կարճեցման ինդեքսները տրված են 17 սեգմենտային մոդելում Post systolic index - հետսիստոլիկ կարճեցման ինդեքս; ANT\_SEPT – առաջա-միջնապատային սեգմենտ; ANT – առաջային սեգմենտ; LAT – կողմնային սեգմենտ; POST – հետին սեգմենտ; INF – ստորին սեգմենտ; SEPT – միջնապատային սեգմենտ; GLPS – ընդհանուր երկայնակի հետսիստոլիկ դեֆորմացիա, LAX – ապիկալ երկայնակի առանցք; A4C – ապիկալ 4-խոռոչանի դիրք; A2C – ապիկալ երկխոռոչանի դիրք; GLPS\_Avg – ընդհանուր երկայնակի հետսիստոլիկ դեֆորմացիայի միջին արժեք, AVC\_MEAS – արորտալ փականի փակման ժամանակ; HR – սրտի կծկման հաճախականություն

Սրտամկանի դիաստոլիկ կոշտությունը որոշվել է E/e' բաժանելով 3D ՁՓՎԴԾ-ին՝ E/e' / ՁՓՎԴԾ (Kasner M et al., 2011; 2015): ՁՓ վերջնական սիստոլիկ ճնշումը (ՁՓՎՍՃ) որոշվել է որպես՝ ՁՓՎՍՃ = 0,9 x սիստոլիկ արյան ճնշում (Kelly RP et al., 1992):

ՁՓ վերջնական սիստոլիկ կոշտությունը (ՁՓՎՍԿ) որոշվել է որպես՝ ՁՓՎՍԿ = ՁՓՎՍՃ / ՁՓՎՍԾ (3D) (Kass DA et al., 1992; Burkhoff D et al., 2005):

ՁՓ-ի երկայնակի դեֆորմացիան (ՁՓԵԴ) չափվել է էխոպատկերի ավտոմատացված ֆունկցիայի ռեժիմով [Speckle tracking, Automated function imaging (AFI)], ստանդարտ ապիկալ դիրքերի ստացմամբ և պահպանմամբ, որից հետո Speckle tracking/AFI ծրագրով որոշվել է ՁՓ-ի երկայնակի սեգմենտար և ընդհանուր դեֆորմացիան: ՁՓԵԴ ավտոմատ որոշվել է ինչպես յուրաքանչյուր սեգմենտի համար, այնպես էլ ընդհանուր 17 սեգմենտների համար (նկար 1): Այնուհետև որոշվել է ՁՓ-ի յուրաքանչյուր սեգմենտի և ընդհանուր 17 սեգմենտային հետսիստոլիկ ինդեքսը (ՀՄԻ): ՀՄԻ-ն մի չափորոշիչ է, որը բնորոշում է առանձին սեգմենտների հետսիստոլիկ կարճեցման առկայությունը և աստիճանը (նկար 2):

Նկար 3. Ճախ նախասրտի երկայնակի դեֆորմացիայի չափորոշիչների որոշումը




LASmx – maximal left atrial strain – Ճախ նախասրտի առավելագույն դեֆորմացիա (ռեգերվուար ֆունկցիա); AVO – aortic valve opening – աորտալ փականի բացում; AVC – aortic valve closure – աորտալ փականի փակում:

ՁԼ-ի երկայնակի դեֆորմացիայի (ՁԼԵԴ) և ՁԼ-ի երկայնակի դեֆորմացիայի արագության (ՁԼԵԴԱ) որոշումը կատարվել է ապիկալ չորս և երկխոռոչանի դիրքերից (նկար 3;4): Ստուգիչ ծավալը տեղակայվել է ՁԼ-ի բոլոր պատերի միջին և ստորին հատվածներում՝ ստանալով ՁԼԵԴ և ՁԼԵԴԱ կորերը: Ստացված ութ սեգմենտների ցուցանիշների արժեքները միջինացվել են: ՁԼԵԴ ռեժիմով որոշվել է առավելագույն արժեքը՝ որպես ՁԼ-ի ռեգերվուար ֆունկցիայի ճշգրիտ չափորոշիչ: ՁԼԵԴԱ ռեժիմով որոշվել են Ճախ նախասրտի երկայնակի դեֆորմացիայի արագությունը սիստոլայի, վաղ և ուշ դիաստոլայի ժամանակ: ՁԼ-ի


ներնախասրտային դիսսինքրոնիան (ՆՆԴ) որոշվել է ԷՍԳ P ատամիկի և ուշ դիաստոլայում ՉՆԵԴԱ սկզբի, ինչպես նաև նրա առավելագույն արժեքի ժամանակային ինտերվալով (նկար 5): Ստուգիչ խմբի տվյալների հիման վրա երկու չափորոշիչների արժեքները համարվել են որպես ներնախասրտային դիսսինքրոնիա:

Նկար 4. ՉՆ-ի երկայնակի դեֆորմացիայի արագության չափորոշիչների որոշումը



Cc - 2ախ նախասրտի երկայնակի դեֆորմացիայի արագությունը սիստոլայում;  
 Ce - 2ախ նախասրտի երկայնակի դեֆորմացիայի արագությունը վաղ դիաստոլայում;  
 Ca - 2ախ նախասրտի երկայնակի դեֆորմացիայի արագություն ուշ դիաստոլայում

Նկար 5. Ներնախասրտային դիսսինքրոնիայի որոշումը




AVO – աորտալ փականի բացում, AVC – աորտալ փականի փակում; P-Lac – ԷՍԳ P ատամիկից մինչև ՉՆ-ի կծկման սկզբի ԵԴԱ արժեքը 30 մվ; P-Sa – ԷՍԳ P ատամիկից մինչև ՉՆ-ի առավելագույն երկայնակի դեֆորմացիայի արագությունը ուշ դիաստոլայում 80 մվ

ԷՍԳ P ատամիկի և ուշ դիաստոլայում ՉՆ-ի երկայնակի դեֆորմացիայի արագության սկզբի ժամանակային ինտերվալի համար՝  $>30 \pm 6$  մվ և/կամ ԷՍԳ P

ատամիկի և ուշ դիաստոլայում ՁՆ-ի երկայնակի դեֆորմացիայի արագության առավելագույն արժեքի ժամանակային ինտերվալի համար՝  $>90 \pm 5$  մվ: Միջնախասրտային մեխանիկական դիասինքրոնիան (ՄՆԴ) որոշվել է երկու նախասրտերի կողմնային պատերի միջև՝ ըստ միջին սեգմենտների հյուսվածքային արագության տեղաշարժման ժամանակի: Ստուգիչ խմբի տվյալների հիման վրա 30 մվ-ից բարձր արժեքների դեպքում համարվել է որպես միջնախասրտային դիասինքրոնիա (նկար 6): Չախ նախասրտի կոշտության ինդեքսը (ՉՆԿԲ) հաշվարկվել է որպես  $E/e' / \text{ՉՆԵԴ}$  (Machino-Ohtsuka T. et al., 2011): Թոքային զարկերակի սիստոլիկ ճնշումը (ԹԶՍԸ) չափվել է տրիկուսիդալ փականի հետհոսքի մաքսիմալ ճնշման գրադիենտի և աջ նախասրտի ճնշման գումարով:

Նկար 6. Միջնախասրտային դիասինքրոնիայի որոշումը



Նշանները տեղադրված են նախասրտերի կողմնային պատերին: MVC – միտրալ փականի փակում, MVO – միտրալ փականի բացում, AVO – աորտալ փականի բացում, AVC– աորտալ փականի փակում:

### Պահպանված արտամոլման ֆրակցիայով սրտային անբավարարության և նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիայի ախտորոշումը

Դիաստոլիկ դիսֆունկցիայի ախտորոշումը թեև կատարվել է բազմաչափորոշիչային մոտեցմամբ և ԷխոՄԳ ծանրաբեռնվածության փորձի միջոցով, քանի որ միտրալ հոսքի տիպերը հանգստի ժամանակ չեն հանդիսանում հուսալի ախտորոշման միջոց պահպանված ԱՖ-ով հիվանդների մոտ, հետազոտվող խմբերից յուրաքանչյուրում հիվանդները բաժանվել են երեք ենթախմբերի՝ ըստ հանգստի ժամանակ կատարված ԷխոՄԳ որոշված ՁՓ-ի դիաստոլիկ դիսֆունկցիայի տիպի.

1. Առաջին (I) տիպի չափավոր աստիճանի դիաստոլիկ դիսֆունկցիա է, երբ  $E/A < 0.8$ ,  $IVRT > 85$  մվ,  $E DT > 250$  մվ, իսկ  $E/e' > 8$ :
2. Պևսդոնորմալ տիպ, որի դեպքում  $E/A > 1$ ,  $E DT < 160$  մվ, իսկ  $E/e' > 8$ :

3. Ռեստրիկտիվ տիպ, երբ՝  $E/A > 2$ ,  $E \cdot DT < 160$  մվ,  $IVRT < 55$  մվ, իսկ  $E/e > 8$  (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ենթախմբերում հիվանդների տեղաբաշխումը

	ՆԴԴ			ՊԱՖՍԱ (NYHA II/III)			P
	Չափա վոր	Պսևոնոր մալ	Ռեստրիկ տիվ	Չափա վոր	Պսևոնոր մալ	Ռեստրիկ տիվ	
Հիվանդների քանակը (n)	56	54	52	52	54	57	>0.05
Կանայք (n)	32	33	32	33	31	32	>0.05
Շաքարային դիաբետ (n)	13	11	14	12	15	13	>0.05
Զարկերակ. գերճնշում (n)	43	43	38	40	39	44	>0.05
ԶՓ-ի գերաճ (n)	38	35	37	38	34	37	>0.05

Աղյուսակ 3

ՊԱՖՍԱ-ի բազմաչափորոշիչային ախտորոշում

	ԶՓ-ի նորմալ թուլացում	ՆԴԴ	ՊԱՖՍԱ
$e'$ միջինացված (սմ/վ)	$\geq 9$	$< 9$	$< 9$
ՁՆԾ-ի ինդեքս (մլ/մ <sup>2</sup> )	$< 33$	$< 33$	$\geq 34$
ԹՁՍՃ (մմ սս)	$\leq 36$	$\leq 36$	$> 36$
NTpro-ՈԲՆՊ (պգ/մլ)	$< 220$	$< 220$	$> 220$
$E/e'$ միջինացված (հանգիստ/ծանրաբեռնվածություն)	$\leq 8$	8-13	$\geq 13$
$E < A$ տրանսմիտրալ հոսք ( $> 60$ տարեկան)	+	+	+
Պսևոնորմալ / $E/A > 2$ / տրանսմիտրալ հոսք	-	+	+

ՁՆԾ – ձախ նախարտի ծավալ, ԹՁՍՃ – թոքային զարկերակի սիստոլիկ ճնշում, ՈԲՆՊ – ուղեղային նատրիուրետիկ պեպտիդ, ՆԾ – նախասրտերի շողացում, ՆԴԴ – նախակլինիկական դիաստոլիկ դիսֆունկցիա, ՊԱՖՍԱ – պահպանված արտամղման ֆրակցիայով սրտային անբավարարություն

Հաշվի է առնվել այն փաստը, որ պահպանված ԱՖ-ով անձանց մոտ  $E/e' > 13$  ցուցանիշը ԶՓ-ի լեցման ճնշման բարձրացման խիստ հավաստի տվյալ է, իսկ  $E/e' < 8$  ցուցանիշը ԶՓ-ի լեցման ճնշման նորմալ լինելու հանգամանք, Մոխրագույն գոտի է համարվում  $E/e'$  ցուցանիշի 8-ից մինչև 13 սահմանում գտնվող արժեքները: ՆԴԴ-ի և ՊԱՖՍԱ-ի ախտորոշումը կատարվել է բազմաչափորոշիչ (Penicka M. et al., 2014) մոտեցման տարբերակով, առկա չափորոշիչների 50% և ավել առկայության կամ բացակայության պարագայում (աղյուսակ 3):

Բոլոր այն հիվանդների մոտ, որոնց E/e' ցուցանիշը գտնվում էր 8 – 13 սահմանում, ՆԴԴ կամ ՊԱՖՍԱ ախտորոշման համար կիրառվել են դիաստոլիկ էխոՍԳ ծանրաբեռնվածության փորձի արդյունքները և այդ փորձի արդյունքների դրական առկայության դեպքում ընդգրկվել են հետազոտության մեջ: Հիվանդները ում E/e' >13 հանգստի ժամանակ (n=32), ըստ գանգատների բացակայության կամ առկայության նաև՝ չափորոշիչների </>50% դրական արժեքների(բացառությամբ E<A և պսևդոնորմալ հոսքերի), ախտորոշվել են որպես ՆԴԴ կամ ՊԱՖՍԱ: Հիվանդները ում E/e' >13 հանգստի ժամանակ (n=32), ըստ գանգատների բացակայության կամ առկայության նաև՝ չափորոշիչների </>50% դրական արժեքների(բացառությամբ E<A և պսևդոնորմալ հոսքերի), ախտորոշվել են որպես ՆԴԴ կամ ՊԱՖՍԱ:

**Ծանրաբեռնվածության տրեդմիլ էխոսրտագրական հետազոտություն**

Դիաստոլիկ ծանրաբեռնվածության տրեդմիլ էխոՍԳ-ը (ՕԷխոՍԳ) իրականացվել է ինչպես ՆԴԴ-ի կամ ՊԱՖՍԱ-ի բացահայտման նպատակով, այնպես էլ յուրաքանչյուր տարի՝ բոլոր հետազոտվողների մոտ դիաստոլիկ և սիստոլիկ ռեզերվի ցուցանիշների վերլուծության նպատակով: ՕԷխոՍԳ կատարելիս էխոՍԳ պատկերների գրանցումը և պահպանումը կատարվել է մինչև հետազոտությունը, նաև՝ ծանրաբեռնվածությունից հետո: Տվյալները offline ռեժիմում ենթարկվել են վերլուծության: ՕԷխոՍԳ հետո տվյալները գրանցվել են 2 րոպեի ընթացքում՝ հաշվի առնելով, որ դիաստոլիկ դիսֆունկցիան առավելագույնը պաշտպանվում է 2 րոպե ծանրաբեռնվածությունից հետո (Ha et al. Circ J, 2008):

**Աղյուսակ 4**

Դիաստոլիկ դիսֆունկցիայի ախտորոշումը ըստ ծանրաբեռնվածության դիաստոլիկ էխոսրտագրական հետազոտության

Ցուցանիշներ	Դիաստոլիկ դիսֆունկցիայի բացակայություն	Դիաստոլիկ դիսֆունկցիա
E	Բարձրացում	Բարձրացում
e'	Բարձրացում	Անփոփոխ կամ ցածրացում
E/e'	<8	>13
E DT	>160մվ	<160մվ
ԹԶՍՃ	<35	>35

E - տրանսմիտրալ վաղ լեցման արյան հոսքի արագություն, E/e' - տրանսմիտրալ վաղ լեցման արյան հոսքի հարաբերությունը e' միոկարդիալի, E DT – տրանսմիտրալ վաղ լեցման արյան հոսքի դանդաղեցման ժամանակ, ԹԶՍՃ- թոքային զարկերակի սիստոլիկ ճնշում

ՕԷխոՍԳ կատարվել է այնքան տևողությամբ, որպեսզի կամ հիվանդի մոտ առաջանա հևոց, կամ էլ՝ հիվանդի սրտի զարկերի հաճախականությունն ավելանա՝ մինչև 120 զարկ մեկ րոպեում: Դիաստոլիկ դիսֆունկցիայի ախտորոշումը ըստ ՕԷխոՍԳ տրված է աղյուսակ 4-ում: Այն հիվանդները, որոնք չեն կարողացել կատարել տրեդմիլ տեստ, հետազոտվել են 10 կքանստումից հետո:

ԾելսոՒՍԳ-ից հետո սահմանային գոտում գտնվող հիվանդների մոտ ( $n=28$ ) ՆԴԴ-ի և ՊԱՖՍՍ-ի տարբերակիչ ախտորոշման համար կիրառվել է նաև բազմաչափորոշիչային մոտեցման ախտորոշման մեջ ներառված NT-proBNP-ի որոշում: NTproBNP-ի >220 պգ/մլ արժեքների դեպքում ախտորոշվել է ՊԱՖՍՍ, իսկ <220 պգ/մլ արժեքների դեպքում՝ ՆԴԴ:

### **Նախասրտերի շողացման ռիսկի գնահատում**

ՆՇ-ի ռիսկի գնահատման նպատակով բոլոր խմբերում կատարվել է լրացուցիչ ներխմբային ուսումնասիրություն, որի նպատակն է եղել հայտնաբերել ՆՇ ունեցող հիվանդներին, ինչպես նաև հայտնաբերել նոր նախասրտերի շողացման դեպքերը:

Ե՛վ ՊԱՖՍՍ-ով, և՛ ՆԴԴ-ով հիվանդների խմբերում կատարվել է ներխմբային տարանջատում: Յուրաքանչյուր խմբում հիվանդները բաժանվել են երեք խմբերի. առաջին խմբում ներառվել են այն հիվանդները, որոնց անամնեզում չի եղել ՆՇ, երկրորդ խմբի հիվանդների մոտ գոնե մեկ անգամ նշվել է նոպայաձև ՆՇ, իսկ երրորդ խմբում ներառվել են անամնեզում գոնե մեկ անգամ պերսիստենտ ՆՇ-ով հիվանդները: Խմբերում գնահատվել են ՆՇ-ի նոր դեպքերի հաճախականությունը և դրանց առաջեցման ռիսկը: Ասիմպտոմատիկ ՆՇ-ի նոպաների հայտնաբերման նպատակով բոլոր հիվանդներին 3 ամիսը մեկ անգամ կատարվել է 48 ժամ տևողությամբ էլեկտրասրտագրական (Հոլտեր) հետազոտություն Edan SE-2003 սարքով: Հիվանդների դիտարկումը և ուսումնասիրությունը ընթացել է երեք տարի: Բոլոր չափումները կատարվել են երկու հետազոտողների կողմից, դիտարկման յուրաքանչյուր տարվա վերջում:

### **Վիճակագրական վերլուծությունների մեթոդաբանությունը**

Հետազոտությունների տվյալների վիճակագրական վերլուծությունը կատարվել է SPSS ծրագրային փաթեթով (SPSS 15.0, SPSS Inc, Chicago, IL, USA) և Microsoft Excel XP համակարգչային ծրագրի օգնությամբ: Օգտագործվել է վիճակագրական հիպոթեզների ստուգման մեթոդը: Խմբերում և ենթախմբերում ցուցանիշների վարիացիոն շարքերի համար տրվել են միջին արժեքներ և դրանց ստանդարտ շեղումները ( $m \pm SD$ ): Խմբերի և ենթախմբերի ցուցանիշների միջին արժեքները համեմատվել են ըստ Մոյտլոենտի  $t$ -տեստի և Ման-Ուիլսոնի  $U$ -տեստի: Թվային ցուցանիշների միջև կապը գնահատելու համար օգտագործվել է գծային ռեգրեսիայի հավասարումը՝ Պիրսոնի կորելացիայի գործակցի՝  $r$  որոշմամբ: ՊԱՖՍՍ-ի և ՆՇ-ի անկախ կանխորոշիչների հայտնաբերման համար օգտագործվել է բինար ռեգրեսիոն անալիզը: Ներկայացվել են ռեգրեսիոն գործակիցները (B), Վալդի վիճակագրությունը, հնարավորությունների հարաբերակցությունը: Վիճակագրական վերլուծությունները կատարվել են հավաստիության 95% միջակայքերում: Երկու խմբերի միջև տվյալները համեմատելիս  $P$  ցուցանիշը երկկողմանի է և համարվել է հավաստի, եթե  $P < 0.05$ :

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### ՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՐՏԱՄՂՄԱՆ ՖՐԱԿՑԻԱՅՈՎ ՍՐՏԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ, ՆԱԽԱԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԻԱՍՏՈԼԻԿ ԴԻՏՖՈՒՆԿՑԻԱՅՈՎ ԵՎ ՍՏՈՒԳԻՉ ԽՍԲԵՐՈՒՄ ԴԻՆԱՍԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետազոտության մեջ ներառված ՆԴԴ-ով, ՊԱՖՄԱ-ով, նաև ստուգիչ խմբի հիվանդների ուսումնասիրության արդյունքները երեք տարիների ընթացքում ցույց են տվել, որ առկա են ներխմբային, միջխմբային մի շարք տարբերություններ: Համեմատած ստուգիչ խմբի տվյալների հետ, ՆԴԴ և ՊԱՖՄԱ հիվանդների մոտ նկատվել են մի շարք էխոՍԳ չափորոշիչների տարբերություններ (աղյուսակ 5):

#### Աղյուսակ 5

Ելքային ցուցանիշների տվյալները ՆԴԴ, ՊԱՖՄԱ և ստուգիչ խմբերում

Ցուցանիշները	ՆԴԴ	ՊԱՖՄԱ	Ստուգիչ խումբ	P1	P2	P3
ՍՁԻ (կգ/մ <sup>2</sup> )	30,09±4.4	31±4	19±3	0,52	<0.001	<0.001
ՍՁՃ ( մմ u.u.)	136,6±12.3	145±14,2	123±9,6	<0.001	<0.001	<0.001
ԴՁՃ (մմ սս)	92,8±9	93,6±10,3	78±6,3	0,7	<0.001	<0.001
Արյան զյուկոնոզ. (մմոլ/լ)	6,7±1.2	6,4±1,7	4,2±1,16	0,06	<0.001	<0.001
ՉՓՁԻ (գ/մ <sup>2</sup> )	118±16	126,3±15,5	88,3±10,7	0,28	<0.001	<0.001
ՉՓԵԴ (%)	-16,4±2	-11,6±1,8	-20,4±2,2	<0.001	<0.001	<0.001
E/e δ	13,1±2	17,3±2,1	6,6±1,5	<0.001	<0.001	<0.001
E/e h	10,9±1,75	11,2±2	6,9±1,4	0,24	<0.001	<0.001
ՀՄԻ (%)	25,4±4,8	30±4,4	7,3±2	<0.001	<0.001	<0.001
ՁՆԵԴ (%)	12±3	9,3±2,2	28,8±3,3	<0.001	<0.001	<0.001
e սմ/լ	6,8±1,5	6,4±1,3	8,8±1,6	0,051	<0.001	<0.001
ՁՆԵԴՍ (սմ <sup>-1</sup> )	0,8±0,18	0,51±0,11	1,2±0,3	<0.001	<0.001	<0.001
ՁՆԵԴՍe (սմ <sup>-1</sup> )	0,7±0,2	0,41±0,15	1,4±0,14	<0.001	<0.001	<0.001
ՁՆԵԴՍa (սմ <sup>-1</sup> )	0,83±0,21	0,4±0,13	1,09±0,21	<0.001	<0.001	<0.001
ՁՆԿԻ	0,9±0,21	1,2±0,43	0,31±0,12	<0.001	0,002	<0.001
E/e՝ԱՓ	4,26±1,9	6,8±2,3	3,75±1,14	<0.001	0,127	<0.001
ՁՆԾԻ մաքս. (մ/մ <sup>2</sup> )	32,2±4,1	38,1±4,8	27,2±5,1	0,0042	0,009	<0.001
ԹՉՍՃ h (մմ u.u.)	32,5±5,4	33,2±7	23±3	0,4	<0.001	<0.001
ԹՉՍՃ δ (մմ u.u.)	41.1±8	52±9	27,3±6,9	<0.001	<0.001	<0.001

Հարկ է նկատել, որ ՆԴԴ-ի և ՊԱՖՄԱ-ի խմբերում այս ցուցանիշներից որոշների մոտ ելքային համեմատության ժամանակ հավաստի տարբերություններ ևս նկատվել էին: Մասնավորապես, ՆԴԴ-ով հիվանդների մոտ ՁՆՄԾԻ և ՉՓՁԻ հավաստի բարձր էր ՊԱՖՄԱ-ով հիվանդների խմբում՝ համեմատած ՆԴԴ-ի խմբի ցուցանիշների հետ: ՍՁՃ հավաստի բարձր է եղել ՊԱՖՄԱ-ով հիվանդների մոտ՝ համեմատած մնացած



խմբերի հետ: ՆԴԴ-ի խմբում, համեմատած ստուգիչ խմբի հետ, ՍՁԸ-ն բարձր էր: ՆԴԴ-ով և ՊԱՖՍԱ-ով հիվանդների խմբերում գրանցվել են նաև մի շարք հյուսվածքային ԷխոՍԳ չափորոշիչների տարբերություններ՝ համեմատած ստուգիչ խմբի հետ, թեև ՊԱՖՍԱ-ի խմբում, ՆԴԴ-ի համեմատ, ՁՆԵԴ, ՁՓԵԴ եղել են ավելի ցածր, ՁՓՀՄԻ և ԾԷխոՍԳ-ից հետո E/e'-ն ավելի բարձր: Պետք է նկատել, որ ՆԴԴ-ի և ՊԱՖՍԱ-ի խմբերի համեմատության ժամանակ ՁՆԵԴԱ տարբերվել է՝ լինելով առավել ցածր ՊԱՖՍԱ-ի խմբում: ՆԴԴ-ի խմբում ծանրաբեռնվածության E/e', ԱՓ-ի E/e', ՁՆԿԻ ցուցանիշները ՊԱՖՍԱ-ի համեմատ ցածր են եղել, սակայն ստուգիչ խմբի արդյունքների հետ համեմատելիս նկատվել են տարբերություններ (աղյուսակ 6): Խմբերում ՁՓԴԿ-ի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ն՝ ՊԱՖՍԱ-ի խմբում, և՛ ՆԴԴ-ի խմբում ՁՓԴԿ-ն, և՛ հանգստի, և՛ ԾԷխոՍԳ-ից հետո զգալիորեն զերազանցում էին ստուգիչ խմբի արդյունքներին, սակայն, ՊԱՖՍԱ-ի խմբում ԾԷխոՍԳ-ից հետո ՁՓԴԿ-ն հավաստի մեծ էր ՆԴԴ-ի խմբից (աղյուսակ 6): Հարկ է նշել, որ ծանրաբեռնվածության փորձից հետո ՊԱՖՍԱ-ի խմբի հիվանդների մոտ ՁՓԴԿ-ն հավաստի մեծ էր՝ համեմատած մինչ ԾԷխոՍԳ ստացված արդյունքների հետ: ՁՓՍԿ-ն խմբերում հավաստի չէր տարբերվում ՆԴԴ-ով, ՊԱՖՍԱ-ով հիվանդների մոտ՝ համեմատած ստուգիչ խմբի արդյունքների հետ:

#### Աղյուսակ 6

Միաստիկ և դիաստիկ որոշ չափորոշիչների ելքային արդյունքները խմբերում

Ցուցանիշներ	ՊԱՖՍԱ n=17	ՊԱՖՍԱ n=146	ՊԱՖՍԱ (ընդհանուր) n=163	ՆԴԴ n=162	ՍՏՈՒԳԻԶ n=50
ՁՓԴԿհ	0.125±0.022	0.102±0.032	0.106±0.027*	0.088±0.031*	0.048±0.017&
ՁՓԴԿծ ω	0.149±0.074#	0.210±0.057#	0.206±0.068*#	0.091±0.021*#&	0.064±0.022&
ՁՓՍԿհ	1.85±0.52	1.78±0.62	1.8±0.82	1.65±0.72	1.42±0.35
ՁՓՍԿծ ω	3.1±0.5#	2.3±0.45	2.5±1	2,1±0.53	2±0.46
ՀՇհ (մլ)	60±12a	62±18a	61±19a	64±10	65±11
ՀՇծ (մլ)	55±9# ω	79±19	74±28	79±18#	78±16#
ԲՇհ (լ/ր)	5±1.4	5.2±1.1	5.1±1.5	5.2±1.2	5.4±1.3
ԲՇծ (լ/ր)	6.1±1.3	6.3±2.1	6.2±2.1	6.4±2.4	6.5±2.4

\* p<0.05 համեմատած ստուգիչ խմբի հետ, &p<0.05 համեմատած ՊԱՖՍԱ-ի հետ, #p<0.05 ներխմբային հանգստի և ծանրաբեռնվածության միջև տարբերություն, ω-p<0.05 ՊԱՖՍԱ-ի ներխմբային տարբերություն

Թեև ՆԴԴ-ի և ՊԱՖՍԱ-ի խմբերում ՁՓՍԿ վիճակագրորեն հավաստի տարբերություն չէր նկատվել, սակայն ՊԱՖՍԱ-ի խմբի հիվանդներից 17-ի մոտ (10,4%) ԾԷխոՍԳ-ից հետո ՁՓԴԿ չէր փոփոխվում: Այդ հիվանդների մոտ առաջանում էին նաև ՍԱ-ին բնորոշ զանգատներ: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ հիվանդների մոտ առկա է նաև ՁՓՍԿ մեծացում, առանց ՁՓ ՀՇ և ԲՇ-ի աճի (աղյուսակ 6): Ստուգիչ խմբում ՆՆԴ, ՄՆԴ, ՁՓ ՄԴԻ եղել են նորմալի սահմաններում (աղյուսակ 7): ՆԴԴ-ի և ՊԱՖՍԱ-ի խմբերում ՆՆԴ, ՄՆԴ, նաև ՁՓ-ի ՄԴԻ հավաստի

տարբերվել են ստուգիչ խմբի արդյունքներից: ՊԱՖՍԱ-ի խմբում ՆՆԴ և ՄՆԴ ցուցանիշները հավաստի մեծ էին (աղյուսակ 7): ՆՆԴ նկատվել է ՆԴԴ-ով հիվանդներից 15-ի (9.2%) մոտ և ՊԱՖՍԱ-ով հիվանդներից 35-ի (21.5%) մոտ: ՊԱՖՍԱ-ի և ՆԴԴ-ի խմբերում ներխմբային հետազոտությունը ցույց է տվել, որ ՆՆԴ, ՄՆԴ և ՁՓՄԴ ցուցանիշները չեն տարբերվել՝ կախված դիաստոլիկ դիսֆունկցիայի տեսակից: ՊԱՖՍԱ-ի և ՆԴԴ-ի խմբերում, կախված դիաստոլիկ դիսֆունկցիայի տեսակից, ՊԱՖՍԱ և ՆԴԴ խմբերում միայն ռեստրիկտիվ խմբի հիվանդների մոտ հանգստի ժամանակ որոշված e'ի ցածր էր, E/e'h՝ բարձր (գծանկար 1):

**Աղյուսակ 7**


Միջնախասրտային, ներնախասրտային մեխանիկական դիսսինքրոնիայի և ՁՓ սիստոլիկ դիսսինքրոնիայի էլքային ցուցանիշները խմբերում

Ցուցանիշները	ՆԴԴ	ՊԱՖՍԱ	Ստուգիչ խումբ	p1	p2	p3
ՄՆԴ (մվ)	20,38±6,24	34,6±7	12±2,3	<0,01	<0,01	<0,01
ՆՆԴս (մվ)	25±4,8	32±9	18±3,5	<0,01	<0,01	<0,01
ՆՆԴմաքս (մվ)	70±7,3	90±11	38±4	<0,01	<0,01	<0,01
ՁՓ ՍԴԻ (%)	3,8±2,1	11±2,2	2.7±1.1	<0,01	>0,05	<0,01

p1 - ՆԴԴ և ՊԱՖՍԱ միջև տարբերությունը, p2-ՆԴԴ-և ստուգիչ խմբերի տարբերությունը, p3- ՊԱՖՍԱ և ստուգիչ խմբերի տարբ.

**Գծանկար 1**

ՊԱՖՍԱ և ՆԴԴ ներխմբային էլքային համեմատական արդյունքները՝ դիաստոլիկ դիսֆունկցիայի տեսակից




ՊԱՖՍԱ-ի, ՆԴԴ-ի եվ ստուգիչ խմբերի էլքային և երեք տարի անց ցուցանիշների ներխմբային համեմատական արդյունքները պահպանել են էլքային տարբերությունները (գծանկարներ 2-6): Ըստ մեկ, երկու և երեք տարի անց հետազոտության արդյունքների՝ խմբերում, ընդհանուր առմամբ, ձախ փորոքի սիստոլիկ և դիաստոլիկ կոշտությունների ցուցանիշների տարբերությունները պահպանվել են՝ համեմատած էլքային արդյունքների հետ: Երեք տարի անց սրտի

Էլեկտրամեխանիկական համակցման խանգարումները բնորոշող չափորոշիչները խմբերում էական փոփոխությունների չեն ենթարկվել՝ պահպանելով ելքային, նաև ընթացիկ ուսումնասիրությունների ժամանակ նկատված փոփոխությունները:


Գծանկար 2

ՊԱՖՍԱ, ՆԴԴ և ստուգիչ խմբերում հետազոտության արդյունքները 3 տարի անց




Գծանկար 3

ՊԱՖՍԱ, ՆԴԴ և ստուգիչ խմբերում հյուսվածքային ԷխտՍԳ արդյունքները 3 տարի անց




Գծանկար 4

ՊԱՖՍԱ, ՆԴԴ և ստուգիչ խմբերում ՉՆ հյուսվածքային ԷխտՍԳ արդյունքները 3 տարի անց




**Գծանկար 5**

3 տարի անց միջնախասրտային, ներնախասրտային մեխանիկական ասինքրոնիայի և ՉՓ սիստոլիկ դիսսինքրոնիզացիայի ինդեքսի ցուցանիշները խմբերում



**Գծանկար 6**

3 տարի խմբերում անց դիաստոլիկ և սիստոլիկ որոշ չափորոշիչների արդյունքները




**ՆԱԽԱԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴԻԱՍՏՈԼԻԿ ԴԻՍՖՈՒՆԿՑԻԱՑՈՎ ՇԻՎԱՆՂՆԵՐԻ ՄՈՏ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՐՏԱՄՂՄԱՆ ՖՐԱԿՑԻԱՑՈՎ ՍՐՏԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ**

ՊԱՖՄԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների քանակը ըստ տարիների աճում էր (գծանկար 7): ՊԱՖՄԱ-ի զարգացումը կախված չի եղել ՉՓ ԴԻ տիպից (աղյուսակ 8):

**Գծանկար 7**

Երեք տարվա ընթացքում ՆԴԴ-ով հիվանդների մոտ ՊԱՖՄԱ-ի զարգացումը



Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՊԱՖՄԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների և ՊԱՖՄԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների ելքային տվյալների համեմատության ժամանակ մի շարք էխոսրտագրական ցուցանիշների միջև առկա են հավաստի տարբերություններ (գծանկարներ 8-10):

### Աղյուսակ 8


Երեք տարվա ընթացքում ՆԴԴ-ով հիվանդների մոտ ՊԱՖՍԱ-ի զարգացումը՝ կախված ԴԴ-ի տիպից, որոշված տրադիցիոն դոպլեր էխոՍԳ-ով

ՉՓ ԴԴ-ի տիպը	Հիվանդների քանակը	Հիվանդների քանակը	Հիվանդների %	P
Չափավոր	56	14	25%	Ոչ
Պակտոնորմալ	54	14	25.9%	Ոչ
Ռեստրիկտիվ	52	15	28.8%	Ոչ
Ընդհանուր քանակը	162	43	26.5%	-

Ոչ-վիճակագրորեն ոչ հավաստի տարբերություն (P>0.05)


### Գծանկար 8

ՊԱՖՍԱ զարգացած և ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների ելքային տվյալների համեմատությունը



### Գծանկար 9

ՊԱՖՍԱ զարգացած և ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների ելքային հյուսվածքային էխոՍԳ չափորոշիչների համեմատությունը




Հանգստի և ծանրաբեռնվածության ՉՓՄԿ, ՉՓԴԿ, ՀՄ և ԸԾ հավաստի չեն տարբերվել ՊԱՖՍԱ զարգացած և ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների խմբերում: Սակայն, ծանրաբեռնվածության ՉՓԴԿ-ն ՊԱՖՍԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների խմբում հավաստի բարձր էր ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների խմբի արդյունքներից:

ՊԱՖՍԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների ելքային ՆՆԴ և ՄՆԴ եղել են բարձր (աղյուսակ 9): Պետք է նկատել, որ այն հիվանդները, ովքեր ի սկզբանե ունեին ՆՆԴ-ի

զգալի խանգարում [ՆԴԴ-ով հիվանդների խմբից 15-ի մոտ (9.2%)], բոլորի մոտ էրրորդ տարվա վերջում արդեն զարգացել էր ՊԱՖՍԱ:


**Գծանկար 10**

ՊԱՖՍԱ զարգացած և ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների ՁՆ հյուսվածքային էխոսԳ էլքային չափորոշիչների համեմատությունը



**Գծանկար 11**

Միաստովիկ և դիաստովիկ որոշ չափորոշիչների էլքային արդյունքները ՊԱՖՍԱ զարգացած և ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ-ով հիվանդների խմբերում



**Աղյուսակ 9**

Միջնախասարտային, ներնախասարտային մեխանիկական դիսսինքրոնիայի և ՁՓ սիստոլիկ դիսսինքրոնիայի էլքային ցուցանիշները ՆԴԴ-ի խմբում

Ցուցանիշները	ՊԱՖՍԱ զարգացած ՆԴԴ	ՊԱՖՍԱ չզարգացած ՆԴԴ
ՄՆԴ (մվ)	26±4,3	17,5±3,8*
ՆՆԴս (մվ)	30±2,5	20±3,4*
ՆՆԴմաքս (մվ)	83±5,4	68±6*
ՁՓ ՄԴԻ (%)	6,4±1,3	2,9±1,1*

\*-P<0,05 խմբերի միջև տարբերությունը

**ՊԱՖՍԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների ցուցանիշների կորելացիոն վերլուծության արդյունքները**

ՊԱՖՍԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների ցուցանիշների կորելացիոն վերլուծության արդյունքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դիաստովիկ զարկերակային

Ճնշման և հետազոտվող ցուցանիշների միջև որևէ կորելացիոն կապ չի նկատվել: Կորելացիոն կապ չի նկատվել նաև ՁՓ-ի հանգստի E/e՛-ի, ՁՓԴԿ-ի և հետազոտվող ցուցանիշների միջև:

Մնացած չափորոշիչների մեջ գրանցվել է դրական կամ բացասական հավաստի կորելացիոն կապ, որոնք ներկայացված են աղյուսակ 10-ում:

**Աղյուսակ 10**

**ՊԱՖՄԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների խմբի ցուցանիշների կորելացիոն վերլուծության արդյունքները**

	ՁՓԵԴ	ՉՄԻ	ՁՆԵԴ	ՁՆԵԴԱս	ՁՆԵԴԱե	ՁՆԵԴԱն	ՁՆԿԻ	ՄՆԷ	ՆՆԽս	ՆՆԽմսսս	ՁՓ ՄԴԻ	ՁՓԴԿԵ
Պիբսոնի ցուցանիշ	r	r	r	r	r	r	r	r	R	r	r	r
ՍԶՃ	-0,52*	0,51*	-0,51*	-0,52*	-0,5*	0,41*	0,42*	0,4*	0,35	0,32	0,47*	0,54*
ԴԶՃ	-0,21	-0,15	-0,19	-0,22	-0,26	0,21	0,27	0,27	0,20	0,21	0,16	0,30
ՁՓԶԻ	-0,51*	0,52*	-0,55*	-0,54*	-0,48*	0,45*	0,51*	0,48*	0,36	0,37	0,52*	0,71
E/e՛Ե	-0,52*	0,51*	-0,48*	-0,49*	-0,52*	0,41*	0,51*	0,49*	0,49*	0,51*	0,59*	0,74*
E/e՛Ն	-0,21	-0,22	-0,23	-0,25	-0,22	0,21	0,18	0,21	0,31	0,36	0,23	0,34
E/e՛ ԱՓ	-0,52*	0,51*	-0,48*	-0,47*	-0,49*	0,46*	0,45*	0,48*	0,48*	0,46*	0,36	0,58*
ՉՆՄԻ մաքս	-0,49*	0,51*	-0,62*	-0,59*	-0,55*	-0,51*	0,57*	0,49*	0,61*	0,59*	0,62*	0,54*
ԹԶՍՃ	-0,47*	0,46*	-0,45*	-0,53*	-0,55*	-0,48*	0,46*	0,55*	0,23	0,21	0,24	0,27
ԹԶՍՃ Ե	-0,53*	0,48*	-0,51*	-0,55*	-0,52*	-0,47*	0,48*	0,62*	0,53*	0,52*	0,66*	0,49*
ՁՓԵԴ	-	0,62*	0,54*	0,57*	0,61*	0,45*	-0,48*	-0,61*	-0,54*	-0,55*	-	-0,56*
ՄՆԷ	-0,47*	0,51*	-0,52*	-0,49*	-0,51*	-0,47*	0,65*	-	0,63*	0,65*	0,41	0,49*
ՆՆԽս	-0,48*	0,54*	-0,50*	-0,48*	-0,55*	-0,49*	0,59*	0,63	-	0,76*	0,49	0,51
ՆՆԷ մաքս	-0,47*	0,52*	-0,48*	-0,47*	-0,53*	-0,49*	0,58*	0,65	0,76*	-	0,48*	0,52*
ՉՆԿԻ	-0,48*	0,58*	-0,69*	-0,61*	-0,58*	-0,49*	-	0,65*	0,59*	0,58*	0,48	0,52*
ՁՓ ՄԴԻ	-0,58*	0,67*	-0,61*	-0,52*	-0,51	-0,53*	0,48	0,41	0,49*	0,48*	-	0,75*
ՁՓԴԿԵ	-0,65*	0,58*	-0,59*	-0,55*	-0,57*	-0,50*	0,52	0,49*	0,51*	0,52*	0,75*	-

\* - չավաստի կորելացիոն կապ , p <0,05

**ՊԱՖՄԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների ցուցանիշների ռեգրեսիոն վերլուծության արդյունքները**

Ըստ բինար ռեգրեսիոն վերլուծության արդյունքների՝ ՊԱՖՄԱ-ի զարգացման համար ընտրված ցուցանիշներից սեռը, մարմնի զանգվածի ինդեքսը, ԴԶՃ, արյան մեջ գլյուկոզայի մակարդակը, հանգստի E/e՛, հանգստի ԹԶՍՃ ՊԱՖՄԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների մոտ չեն հանդիսացել ՊԱՖՄԱ-ի զարգացման անկախ կանխորոշիչներ: ՊԱՖՄԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների մոտ ՊԱՖՄԱ-ի զարգացման անկախ կանխորոշիչների շարքում առաջնահերթ տեղ են գրավում ՁՆԵԴ, ՉՆԱԴ և ՁՓԵԴ-ի ցուցանիշները, ինչպես նաև՝ ծանրաբեռնվածության ժամանակ որոշված ՁՓ E/e՛ և ՁՓԴԿ-ն, ՁՓՉՄԻ, ՁՓ-ի ՄԴԻ, նաև՝ ԱՓ E/e՛, ՆՆԷ, ՄՆԷ, ՉՆԿԻ, ՉՆՄԻ, ՁՓԶԻ, ՍԶՃ, ծանրաբեռնվածության ԹԶՍՃ (աղյուսակ 11):

**ՆԱԽԱՐԵՐԻ ՇՈՂԱՑՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԻՍԿԸ ՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՐՏԱՐԴՄԱՆ ՖՐԱԿՑԻԱՅՈՎ ՍՐՏԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆԱԽԱՂԻԱՍՏՈՒԿ ԴԻՏՖՈՒՆԿՑԻԱՅՈՎ ՀԻՎԱՆՂՆԵՐԻ ԽՄԲԵՐՈՒՄ**

Ըստ ելքային արդյունքների՝ ՊԱՖՍԱ-ով հիվանդների խմբում 163 հոգուց 106-ի (65%) մոտ ՆՇ-ի նուպաներ չեն գրանցվել, 26 (15,9%) հիվանդների մոտ անամնեզում եղել են նուպայաձև ՆՇ, իսկ 31-ի (19%) մոտ՝ անամնեզում գրանցվել են պերսիստենտ ՆՇ: Տվյալները ներկայացված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 11

ՊԱՖՍԱ զարգացած ՆԴԴ-ով հիվանդների ցուցանիշների ռեգրեսիոն վերլուծություն

Ցուցանիշներ	ՊԱՖՍԱ-ի կանխորոշիչներ				
	Վալդ	P	Exp(B)	95% վստահելի ինտերվալ EXP(B) համար	
				Ցածր	Բարձր
ՄՁԻ	0.268	0.611	0.813	0.401	1.757
ՍՁԾ*	0.848	0.005	1.891	0.771	1.872
ԴՁԸ	0.263	0.712	1.131	0.756	1.773
Արյան գլյուկոզան	0.754	0.403	1.658	0.532	5.202
ՄՆԴ*	13.446	0.003	2.854	1.651	2.785
ՆՆԴս*	12.123	0.005	2.432	1.221	2.221
ՆՆԴմաքս*	13.112	0.003	2.542	1.532	2.623
ՁՓԴԿձ*	10.223	0.007	2.310	1.109	1.923
ՁՓԴԿհ	0.345	0.071	1.112	0.564	1.121
ՁՓՄԴԻ*	12.334	0.003	2.845	1.871	2.526
E/e'h	0.301	0.083	1.210	0.794	1.526
ԹՁՄՃհ	2.854	0.096	1.453	0.961	2.213
ԹՁՄՃձ*	9.198	0.003	2.645	1.405	2.953
Սեռ	0.253	0.638	1.092	0.803	1.482
ՁՓՁԻ*	10.828	0.008	2.230	0.709	1.813
ՁՆԾԻմաքս*	14.310	0.003	2.681	1.801	2.156
E/e'ծ*	13.205	0.007	2.813	0.354	1.462
E/e'ԱՓ*	12.893	0.008	2.201	0.232	1.184
ՁՓԵԴ*	11.303	0.007	2.569	0.412	0.876
ՁՆԵԴ *	18.113	0.007	3.113	0.734	1.365
ՁՆԵԴԱՏ*	10.190	0.006	2.201	0.871	1.645
ՁՆԵԴԱե*	9.205	0.002	2.210	0.791	1.830
ՁՆԵԴԱa *	9.816	0.008	2.356	0.932	2.012
ՁՆԿԻ*	24.675	0.002	2.678	0.803	1.932

\* - p<0,01, \*\* - p<0,001



ՆԴԴ-ով 162 հիվանդներից 149-ի (91,9%) մոտ անամնեզում ՆՇ չի եղել: ՆԴԴ-ով հիվանդների խմբից անամնեզում նույնպես ՆՇ ունեցել են 6 հիվանդ (3,7%), իսկ անամնեզում պերսիստենտ ՆՇ՝ 7 հիվանդ (4,3%) (աղյուսակ 13):

**Աղյուսակ 12**

**ՊԱՖՄԱ-ով հիվանդների խմբի ելքային տվյալներ՝ ըստ անամնեզում ՆՇ-ի առկայության կամ՝ բացակայության**

	ՆՇ չի նշվում	Նույնպես ՆՇ	Պերսիստենտ ՆՇ	P
Հիվանդների քանակը (N=163/96կին)	106*	26	31	<0,05/ՈՆ
Չափավոր ՉՓ ԴԴ	36	8	10	
Պսևդոնորմալ ՉՓ ԴԴ	35	8	9	
Ռեստրիկտիվ ՉՓ ԴԴ	35	10	12	
Կանայք (N/%)	61/57.5	15/60	20/55	<0,05/ՈՆ
